

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, շաբաթ: Ճրագալույց Ծննդյան: Երեկոյան Մայր տաճարում պաշտվում է Ծննդյան Ճրագալույցի ժամերգությունը, որին ներկա են լինում բազմաթիվ հավատացյալներ:

Ճրագալույցի ժամերգությանը և արարողություններին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի սաներն ընթերցում են Դանիելի գրքի «Երից մանկանց» օրհներգությունը:

Ճրագալույցի ժամերգությունից հետո սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում Ծննդյան տոնի նախատոնակը, և Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի» Ծննդյան շարականը:

Ժամերգության ավարտին եկեղեցական թափորը երգով ու շարականով ուղղվում է դեպի վանական սեղանատուն, ուր օրհնվում են մայրավանքի աղն ու հացը, և միաբանությունն ու ուսանողությունը ճաշակում են Ծննդյան նավակատիքի բարիքները:

Հունվարի 6-ին, կիրակի: Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մայր տաճարն ու նրա շրջափակը, հակառակ խիստ ձմռան ու ձյունին, դեռևս վաղ առավոտից լեցուն է հավատացյալների հոծ բազմությամբ:

Մայր տաճարում առավոտյան պաշտվում է սուրբ Ծննդյան հանդիսավոր ժամերգությունը՝ մասնակցությամբ միաբանության անդամների և ուսանողության:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Տոնական ու զվարթ ղողանջում են Մայր տաճարի զանգերը:

Երգերի, շարականների և ղողանջների ներքո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հայրապետական լրիվ զգեստավորումով, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ ս. Ծննդյան պատարագը մատուցելու:

Ս. պատարագին սպասարկում են տ. Արսեն և տ. Գևորգ եպիսկոպոսները, տ. Գրիգորիս և տ. Մասիս աբեղաները, տ. Հովհաննես և տ. Նշան քահանաները և Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Ծննդյան ս. պատարագի երգեցողությունը տպավորիչ հանդիսավորությամբ կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը՝ Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Ծննդյան տոնի ուրախ առիթով, ոգեշունչ քարոզ է խոսում պատարագիչ Վեհափառ Հայրապետը՝ ավետելով Քրիստոսի ծննդյան բերկրանքը և շնորհավորելով ողջ հայության սրբազան տոնը:

ՀԱՅԿ ԳԱՆՁԱՐԱՆ
ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄ
ԳՐՔԱՏՈՒՆ

Հայոց Հայրապետի քարոզը (տես՝ «Էջմիածին» ամսագիր, 1974 թ., № Ա, էջ 3) նույն օրը, երեկոյան, ձայնասփռվում է Երևանի ռադիոյով:

Հավարտ ս. պատարագի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Փրկչի մկրտության տոնը՝ Զրօրհնյաց հանդեսը:

Ս. սեղանի առաջ դրվում են կաթսաներ՝ լցված ջրով, կաթսաներ, որոնք խորհրդանշում են Հորդանան գետը, որի մեջ մկրտվում է մեր Փրկիչը Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Հայոց Հայրապետը օրհնությամբ և ջրի մեջ ս. մեռոնի հեղմամբ խաչը գցում է ջուրը: Տաճարի կամարների տակ հնչում են «Այսօր ձայնն հայրական» և «Ով զարմանալի» Ծննդյան սքանչելի մեղեդիները:

Հավարտ Զրօրհնյաց հանդեսի Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի դահլիճ, ուր շնորհավորանքներ է ընդունում ս. Ծննդյան տոնի ուրախ առիթով:

Այնուհետև օրհնության խոսք է ասում Հայոց Հայրապետը, շնորհավորում բովանդակ հայության Ամանորն ու ս. Ծննդյան տոնը, օրհնում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովուրդը և խաղաղություն մաղթում ողջ աշխարհին ու համայն մարդկությանը:

Ս. Ծննդյան տոնի առիթով Վեհարանում բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետին և ստանում Նրա օրհնությունը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, օրվա տոնի առիթով, տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Գերագույն հոգևոր խորհուրդը, Արարատյան և վրաստյաց թեմերի առաջնորդ սրբազաններ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, տ. Գևորգ եպիսկոպոսը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբանությունը, Արարատյան թեմի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և Մայր Աթոռի ղեկավար պաշտոնյաներ ու հրավիրյալներ:

Ճաշկերույթին ներկա է լինում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Սեղանն օրհնում է Հայոց Հայրապետը:

Ճաշկերույթի ժամանակ ներկաներից ոմանք շնորհավորում են Հայոց Հայրապետի Նոր տարին և ս. Ծննդյան տոնը՝ Մայր Աթոռի անսասանության, պայծառության և Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արևշատության ու քաջառողջության սրտագին մաղթանքներով:

Նորին Սուրբ Օծությունը նույնպես շնորհավորում է բոլոր ներկաների Ամանորն ու ս. Ծննդյան տոնը՝ մաղթելով Մայր Աթոռի օրհնության ներքո պայծառություն Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցուն, բարօրություն հայրենյաց և խաղաղություն համայն աշխարհին:

Վեհարանի հարկի ներքո ս. Ծննդյան տոնին նվիրված ընդունելությունն ավարտվում է Տերունական աղոթքով: